

ԶԱՐԴԱՐԵԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(Ճառ ՏԻԿ. ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆԻ)

Տիկիներ եւ պարոններ,

Քիչ անգամ մեզի առիթը ընծայուած է զուտ գրական ձեռնարկի մը շուրջ հաւաքուիլ եւ քիչ անգամ նաեւ, գոնէ հաւաքաբար, յաջողած ենք մտահոգուելու գրական եւ գեղարուեստական հոգերով: Գլխաւոր պատճառը անշուշտ մեր ընկերական եւ քաղաքական անկայուն, յուզումնալի, վշտագին եւ յաճախ ալ աղետալի կեանքն է որ կ'սպառէ մեծ մասամբ մեր հոգեկան եւ մտաւորական ոյժերը. բայց նաեւ հաւատացած են որ աւելի հզօր, աւելի ներդաշնակ եւ աւելի գիտական կենսունակութեամբ լի մտաւորականութիւն մը պիտի յաղթահարէր դէպքերուն, պիտի կանգնէր ամէն բանէ վեր, պիտի սաւառներ ամէն բանի վրայ, իբր անվախճան եւ անխոցելի ոգին, լուսեղէն եւ անբռնաբարելի խտէպը մեր ցեղին հաւաքական հանճարին:

Եւ երբ ահա առիթը կ'ստեղծէն նայելու մեր ազգային այդ գերագոյն ինչքին, քննելու, գնահատելու, զայն բաղկացնող երեսները դարձնելու ժողովուրդին յուզուած հետաքրքրութեան, թող չկարծուի երբեք թէ անժամանակ պերճանք մըն է ասիկա մեզի համար: Ամէնէն կենսական, բարբախտն հարցերուն հաւասար կենսական է գիտնալ թէ գեղեցկագիտական ի՞նչ արժէք կը ներկայացնենք, որովհետեւ այդ արժէքն է անշուշտ որ սահմանուած է վերջապէս փրկելու մնացածը:

Բոլոր հին եւ իմաստուն ազգերը, որոնց ամանդութիւնները դեռ իբր հիմ մը կը ծառայեն այսօրուան քաղաքակրթութեան, գիտակցած են այս անառարկելի ճշմարտութեան եւ հաւասար իրենց ամէնէն մեծ հերոսներուն պանծացուցած են իրենց մտքի աշխատաւորները, միայն մեր ժամանակներուն է որ մարդիկ սկսած են անջատել գեղեցիկը օգտակարէն, ու նոյն իսկ աւելորդ ու սնտոյի